ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ-ն ՀԳԴ-ԷԱՃԱՊՁԲ-26/3 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
12	Համազգեստ՝ Ամենօրյա երկարաթև լրակազմ կանացի բարձրագույն դասի, որը ներառում է՝ բաճկոն՝ մուգ կապույտ գույնի (ՀՀ գլխավոր դատախազի և զինվորական դատախազության բարձրագույն դասի կին դատախազների համար մուգ կանաչ գույնի) 44-տոկոսանոց բուրդ, 54-տոկոսանոց պոլիէթիլեն, 2-տոկոսանոց լայկրա կտորից, կոճկվում է կենտրոնական շղթայով, հետևամասը և առաջամասը՝ վերին կտրվածքով, լանջափեշերի վրա վերևից ուղղահայաց վրադիր գրպաններ են՝ ուղղանկյուն կափույրներով: Բաճկոնի կողային գրպանները՝ շեղակի կտրվածքով, շղթայով կոճկվող: Բաճկոնի թևքերը նեղ թեզանիքներով, էլաստիկ ժապավենով են: Օձիքը՝ ծալովի: Բաճկոնը գոտիով է՝ կողքերից էլաստիկ ժապավենով ձգված: Ուսադիրների շրջանում՝ երկու փակօղակներ և երկու կամրջակներ՝ ուսադիրների ամրացման համար: Ձախ թևի ուսակարից 90 մմ ներքև՝ ասեղնագործ թևքանշան՝ Հայաստանի Հանրապետության դատախազության խորհրդանիշի պատկերով, 4.5 սմ շառավղով: Կրծքամասի ձախ գրպանի կափույրի վերևից՝ գրպանի լայնությանը համաչափ մշակվում է 2.5*12.5 սմ չափերի կպչուն ժապավեն «ՀՀ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆ» մակագրության ամրացման համար: Թելի գույնը՝ արծաթագույն, տաբատ՝ մուգ կապույտ գույնի (ՀՀ գլխավոր դատախազի և զինվորական դատախազության բարձրագույն դասի կին դատախազների համար մուգ կանաչ գույնի) 44-տոկոսանոց բուրդ, 54-տոկոսանոց պոլիէթիլեն, 2-տոկոսանոց լայկրա կտորից, ուրվագիծը՝ ուղիղ, առանց ծալքերի, բարձրագույն դասային աստիճան ունեցող ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց համար՝ եզրակարից 0,5 սմ հեռավորությամբ ձգվում է կարմիր վրակարվածք՝ 2,2 սմ լայնությամբ շերտով, տաբատի կողքի կարի ամբողջ երկայնքով, գոտին գոտեմակողերով, կոճկվում է երկու կոճակով և շղթայով,

	արտաքին գրպանները թեք են, շապիկ՝ մուգ կապույտ գույնի (ՀՀ գլխավոր դատախազի և զինվորական դատախազության բարձրագույն դասի կին դատախազների համար մուգ կանաչ գույնի) բամբակյա կտորից՝ 95-տոկոսանոց բամբակ, 5-տոկոսանոց լայկրա: Շապիկն արտադրվում է ուղիղ ձևվածքով, կարճաթև, վզամասը մշակված է 2 սմ լայնության տրիկոտաժե մանժետով՝ եզրագծված 4-5 մմ լայնության կրկնակի զարդակարով: Շապիկի մեջքամասի վերին եզրի կարի տակից կարվում է չափս-հասակի ստուգիչ պիտակ: Թևքերի և փեշի եզրերը՝ ներծալված և 2 սմ լայնքով և եզրագծված 4-5 մմ լայնության կրկնակի զարդակարով:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ООО Канакери кари фабрика в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀԳԴ-ԷԱՃԱՊՁԲ-26/3 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
12	